# ՔԱՋԱՐԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ

# ՆԱԽԱԳԻԾ







2019թ.

Սույն աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակվել է *«Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի*

*ստացում»* ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից ի աջակցություն Հայաստանի մարզերի սոցիալ-տնտեսական հավասարաչափ զարգացումը խթանելու ՀՀ կառավարության ջանքերի՝ տարածքային զարգացման պիլոտային ծրագրի (PRDP) համատեքստում ՀՀ կառավարության 25 տոկոս համաֆինանսավորմամբ, ինչպես նաև այլ շահառուների ֆինանսական ներդրմամբ:

Ծրագիրը նպատակ ունի նպաստելու Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ նորարար տեխնոլոգիաների և նոր տնտեսական հնարավորությունների ձևավորման միջոցով: Այն իրականացվում է 8 խոշորացված համայնքներում՝ Սյունիքի մարզի Մեղրի, Քաջարան, Կապան, Քաջարան, Սիսիան և Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Վայք և Եղեգնաձոր համայնքներում:

Ծրագիրն իր առջև խնդիր է դրել՝

- ստեղծել կարողություններ՝ պլաստիկ թափոններից շինանյութի ստացման համար,
- նվազեցնել գործազրկությունը՝ նաև որակավորում պահանջող աշխատատեղերի ստեղծումով,
- խթանել պլաստիկ թափոնների տարանջատումը՝ նորաստեղծ արտադրամասը հումքով ապահովելու, շրջակա միջավայրը մաքուր պահելու, մարդկանց կենցաղավարման մշակույթը բարձրացնելու նպատակով:

Համայնքներում գոյացող պլաստիկ թափոնները կազմում են կոշտ կենցաղային աղբի ծավալի ավելի քան 30 տոկոսը: Կենսաբանորեն չտարրալուծվելով, պլաստիկը կուտակվում է շրջակա միջավայրում՝ արտազատելով թունավոր գազեր եւ աղտոտելով բնությունը: Այս նախաձեռնությամբ առաջին անգամ Հայաստանում պլաստիկ աղբը տարանջատվելու, հավաքվելու և վերամշակվելու է՝ վերածվելով ցեմենտի փոխարինիչի: Կապանում ստեղծվել է արտադրամաս, որտեղ տեղադրված հոսքագծով վերամշակված պլաստիկ թափոնը որոշակի արտադրական գործընթաց անցնելով և խառնվելով ավազի հետ կվերածվի տարբեր շինանյութերի: Արտադրամասն անխափան պլաստիկ հումքով ապահովելու համար Վայոց Ձորի և Սյունիքի 8 խոշորացված համայնքներում կստեղծվեն անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք կարևոր դերակատարություն են ունենալու արտադրամասը պլաստիկ թափոններով ապահովելու գործում:

Ծրագրի շոշափելի ձեռքբերումներ կլինեն՝

- մեկ ստարտափ ձեռնարկության ստեղծում,

- 35 աշխատատեղի բացում հիմնականում գործազուրկների համար, որից 6-ը՝ բարձր որակավորման պահանջով, 18-ը՝ նորարարական ոլորտում,

- 15 հարակից ձեռնարկությունների կարողությունների բարելավում,

- առնվազն 6 նոր արտադրատեսակի՝ փողոցային եզրաքարեր, սալիկներ, կղմինդր, եւ այլն, թողարկում ստարտափ ձեռնարկության կողմից,

- տարբեր վերապատրաստումներ ավելի քան 60 մարդու համար, որից 50%-ը երիտասարդներ են,

- պլաստիկ թափոնների տարանջատման ավելացում 80%-ով,

- պլաստիկ թափոնների տարանջատման անհրաժեշտության մասին իրազեկում եւ նորարարական արտադրության մասին տեղեկացում 130000 մարդու շրջանում:

Բացի նորաստեղծ ստարտափից, Ծրագիրն աշխատելու է նաև Մեղրի, Ագարակ, Քաջարան, Կապան, Գորիս, Սիսիան, Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր համայնքներում կենցաղային թափոնների կառավարմամբ զբաղվող

ձեռնարկությունների հետ, նրանց համար կկազմակերպվեն դասընթացներ, կտրամադրվեն տեխնիկական միջոցներ:

Այդուհանդերձ, սույն նախաձեռնությունն արդյունավետ չի լինի առանց բնակչության ներգրավման ակտիվ մասնակցության: Տարբեր լսարանների համար կկազմակերպվեն իրազեկման, բնապահպանական կրթության միջոցառումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել կենցաղավարման մշակույթը և բնապահպանական գիտակցությունը: Նոր արտադրատեսակների առաջին խմբաքանակը կտրամադրվի թիրախ համայնքներում որևէ հանրային տարածքի բարեկարգման համար:

Ծրագիրն իրականացնում է Կապանի քաղաքապետարանի գլխավորած կոնսորցիումը.

Կապանի համայնքապետարանի ծրագրային թիմ – kapanproject@gmail.com, 094 868028

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ – info@urbanfoundation.am, 060 612070

«Հայ Կոնսալտ» խորհրդատվական ընկերություն- hovseptan@haiconsult.am, 093 907950

«Մրցունակ հասարակություն» ՍՏ հկ - viktorya@bsc.am, 091 636421

Քաջարան բազմաբնակավայր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի շրջանակներում:

Քաջարանի համայնքապետարանը շնորհակալություն է հայտնում ստորև նշված անձանց քաղաքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման ու նախապատրաստական աշխատանքներում նշանակալից ներդրում ունենալու համար:

Նորայր Հարությունյան-«Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի ղեկավար

Դավիթ Ղազարյան-«Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի համակարգող

Հայաստան Ստեփանյան-«Ուրբան» հիմնադրամ, «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի փորձագետ

Սամվել Նազարյան-«Ուրբան» հիմնադրամ, «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի գնումների և որակի պատասխանատու

Մանվել Փարամազյան - Քաջարան համայնքի ղեկավար,
Կարեն Թադևոսյան - Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ, Վարսենիկ Մկրտչյան–Քաջարան համայքի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի առաջին կարգի մասնագետ,

Քաջարան համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման համար ստեղծված հանձնաժողով.

1. Մանվել Փարամազյան - Քաջարան համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման համար ստեղծված հանձնաժողովի նախագահ

2. Կարեն Թադևոսյան - Քաջարան համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման համար ստեղծված հանձնաժողովի նախագահի տեղակալ

3. Գարեգին Գաբրիելյան – Քաջարան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ

4. Վահե Գրիգորյան - Քաջարան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ

5. Արման Հարությունյան՝ «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ–ի տնօրեն

6. Միրա Կարապետյան - «Քաջարանի կոմունալ տնտեսություն » ՓԲԸ-ի հաշվապահ

7. Զաքարյան Կառլեն -«Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի աղբահանության ստորաբաժանման ղեկավար

8. Արմեն Հակոբյան –Ավագանու անդամ

9. Մերուժան Աթայան – Ավագանու անդամ

Քաջարան համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակման համար ստեղծված աշխատանքային խումբ կազմը.

1. Գարեգին Գաբրիելյան – Քաջարան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ

2. Վարսենիկ Մկրտչյան – Քաջարան համայքի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսւթյան և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի առաջին կարգի մասնագետ

3. Նարե Համբարձումյան- Քաջարան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, Հողի վերահսկողության, կոմ. տնտեսության, տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ

4. Արման Հարությունյան՝ «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ–ի տնօրեն

5. Միրա Կարապետյան - «Քաջարանի կոմունալ տնտեսություն » ՓԲԸ-ի հաշվապահ

6. Կառլեն Զաքարյան -«Քաջարանի կոմունալ տնտեսություն » ՓԲԸ-ի աղբահանության ստորաբաժանման ղեկավար

7. Արմեն Հակոբյան – Ավագանու անդամ

Բովանդակություն


| | |
|---|---|
| Համայնքի ղեկավարի ուղերձը | 6 |
| Օգտագործվող հապավումներ | 7 |
| Նախաբան | 8 |
| Ընդհանուր տեղեկություններ | 8 |
| Գործընթաց և մեթոդաբանություն | 10 |
| ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 10 |
| 1.1. Ընդհանուր տեղեկություններ | 10 |
| 1.2. Օրենսդրական դաշտ և կառավարման կառուցվածք | 12 |
| 1.3. Աղբահանության կառավարում | 12 |
| 1.4. Աղբահանության կառավարման ենթակառուցվածքները | 12 |
| 1.4.1. Աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման համար ծախսվող աշխատաժամանակը և ցիկլի տևողությունը | 12 |
| 1.4.2. Աղբավայր | 14 |
| 1.4.3. Աղբի վերամշակման հմտություններ | 14 |
| 1.4.4. Ֆինանսական – տնտեսական ցուցանիշներ | 15 |
| 1.4.5. Աղբահանության գծով ընկերության եկամուտներն ու ծախսերը | 15 |
| 1.5. Հանրային իրազեկություն և մասնակցություն | 17 |
| 1.6. Իրավիճակի վերլուծություն (SWOT) | 22 |
| ԳԼՈՒԽ 2. ՏԵՍԼԱԿԱՆ և ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐ | 24 |
| ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ | 26 |
| 3.1. Հիմնահարցեր և դրանց դասակարգման չափանիշները | 26 |
| ԳԼՈՒԽ 4. ԽՆԴԻՐՆԵՐ | 32 |
| 4.1. Աղբահանության ռազմավարական նպատակները և խնդիրները | 32 |
| ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ | 38 |
| 5.1. Ընթացիկ ծրագրեր | 38 |
| 5.2. Երկարաժամկետ ծրագրեր | 39 |
| ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄև ԳՆԱՀԱՏՈՒՄ | 53 |
| Օգտագործված հրապարակումների ցուցակ | 54 |

Համայնքի ղեկավարի ուղերձը

Քաջարան համայնքը ընդգրկվելով «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի շրջանակներում ևս մեկ անգամ կարևորում է մաքուր համայնք ունենալու հարցը: Այդ նպատակով համագործակցում ենք «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի հետ, որն այժմ զբաղվում է Քաջարան քաղաքի և նրա վարչական շրջանների աղբահանության և բարեկարգման հարցերով: Հարկ եմ համարում նաև կարևորել «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի իրականացումը: Այս ընթացքում համատեղ աշխատել ենք հարցի լուծման ակնկալիքներով, քննարկումներ ենք կազմակերպել, ձեռք ենք բերել պայմանավորվածություններ:

Կարևորելով բոլոր աշխատանքները՝ ակնկալում եմ յուրաքանչյուրիս մասնակցությունը մաքուր համայնք ունենալու գործում: Արդյունքին հասնելու համար յուրաքանչյուրս պետք է մաքուր պահենք մեր համայնքը, մասնակցենք իրականացվող բոլոր ծրագրերին, շաբաթօրյակների, մեր լուման ունենանք համայնքի մաքրման և բարեկարգման աշխատանքների իրականացման համար,փոխենք մեր վերաբերմունքը մեր փողոցի, մեր համայնքի մեր հանրապետության և երկիր մոլորակի նկատմամբ, քանզի այստեղ ապրում ենք մենք, ապրում և դեռ պետք է ապրեն մեր սերունդները:

Հարգանքով՝ Մ . Փարամազյան

Քաջարան համայնքի ղեկավար

# ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԲՇ - Բազմաբնակարան շենքեր

ՔՀՄ – Քաջարանի համայնքների միություն

ԵՄ - Եվրամիություն

Կազմակերպություն - համայնքում աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպությունը

ԿԱՕ - Կազմակերպություններ և առևտրի օբյեկտներ

ՀԲ - Համաշխարհային բանկ

Պլան - աղբահանության կառավարման ռազմավարական պլան

ԿԿԹ - Կոշտ կենցաղային թափոններ

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՈւՀ - Ուրբան  Հիմնադրամ

# ՆԱԽԱԲԱՆ

*Ընդհանուր տեղեկություններ*

Քաջարան համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլանը մշակվել է՝ «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Ռազմավարության հիմքում ընկած է միջազգայնորեն ընդունված՝ Համաշխարհային Բանկի և ժամանակակից գրականության մեջ օգտագործվող մեթոդաբանությունը: Պլանը կազմելու համար ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի նպատակն է Քաջարան համայնքում աղբահանության խնդիրների մասնակցային վերհանումը և Պլանի կազմումը «Ուրբամ» Հիմնադրամի փորձագետների հետ համատեղ՝ նրանց կողմից կազմակերպված սեմինարների և մատուցված ուսուցողական նյութերի միջոցով: Այդ նպատակով մշակվել և համայնքին է տրամադրվել համայնքի ռազմավարական պլանների մասնակցային մշակման ուղեցույց: Պլանի մշակումը կատարվել է մասնակցային գործընթացով, այսինքն՝ հիմնվել է մտքերի փոխանակման և ներքևից–վերև մոտեցման սկզբունքի վրա: Հաշվի են առնվել Քաջարան բազմաբնակավայր համայնքի աղբահանության կառավարման գործընթացին առնչվող գործնականում բոլոր գլխավոր հիմնախնդիրները, կատարվել է դրանց լուծման ճանապարհների և հնարավոր տարբերակների վերլուծություն:

## Գործընթաց և մեթոդաբանություն

Պլանի մշակումը կատարվել է գրականության ուսումնասիրության և եղած միջազգային փորձի հիման վրա: Օգտագործված գրականության ցանկն իր մեջ ներառում է նաև ՀԲ-ի և ԵՄ-ի կողմից մշակված և հրատարակված նյութեր: Հաշվի առնելով եղած փորձը՝ ռազմավարությունը մշակվել է հայաստանյան իրականությանը համապատասխան: Պլանի մշակումն իրականացվել է հանձնաժողովի և աշխատանքային խմբի անդամների հետ կազմակերպված մի շարք հանդիպումների միջոցով: Ստորև աղյուսակում ներկայացված են հանձնաժողովի և աշխատանքային խմբի հետ հիմնական հանդիպումների թեմաները: Պլանը մշակվել է Աղյուսակ 1-ում ներկայացված գործընթացի, առանձին հանդիպումների, մասնակցային ինտերակտիվ քննարկումների հիման վրա:

Ռազմավարության հիմքում ընկած է միջազգայնորեն ընդունված՝ Համաշխարհային Բանկի և ժամանակակից գրականության մեջ օգտագործվող մեթոդաբանությունը: Պլանը կազմելու համար ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի նպատակն է Քաջարան համայնքում աղբահանության խնդիրների մասնակցային վերհանումը և Պլանի կազմումը «Ուրբան» Հիմնադրամի փորձագետների հետ համատեղ՝ նրանց կողմից կազմակերպված սեմինարների և մատուցված ուսուցողական նյութերի միջոցով:

Աղյուսակ 1. Աղբահանության կառավարման ռազմավարության մշակման գործընթացը և իրականացնողները

| Գործողություն | Իրականացնող |
|---|---|
| 1. Սկզբնական հանդիպում Հանձնաժողովի և Աշխատանքային խմբի հետ Ծրագիրը և գործունեությունը ամփոփ ներկայացնելու համար | Հանձնաժողով, Աշխատանքային խումբ |
| 2. Աղբահանության ոլորտում քաղաքում առկա հիմնահարցերի մասնակցային վերահսկում 4 հիմնական ոլորտներով՝<br>1. Համակարգ և օրինական դաշտ<br>2. Աղբի հավաքում և հեռացում<br>3. Ֆինանսական տնտեսական գործունեություն<br>4. Հանրային իրազեկում և մասնակցություն | Աշխատանքային խումբ |
| 3. Հիմնահարցերի լուծման ճանապարհին ֆինանսական միջոցների գնահատում (ապագա ծրագրերի բյուջեի գնահատում) | Աշխատանքային խումբ/ընկերություն |
| 4. Հիմնահարցերի առաջնահերթությունների դասակարգման համար չափանիշների և դրանց կշիռների որոշմում և հիմնահարցերի դասակարգում միավորներ սահմանելու միջոցով | Աշխատանքային խումբ |
| 5. Ռազմավարական նպատակների սահմանում յուրաքանչյուր 4 ոլորտի համար: Աղբահանության ռազմավարության տեսլականի սահմանում | Աշխատանքային խումբ |
| 6. Քաղաքացիների իրազեկման և մասնակցության վերաբերյալ հանդիպում և հեռախոսային հարցումների տվյալների վերլուծության ներկայացում | Հանձնաժողով և Աշխատանքային խումբ |
| 7. Աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման և վարձավճարների սահմանման ուսուցում | Ընկերություն |
| 8. Ռազմավարական պլանի մշակում և ներկայացում | Հանձնաժողով և Աշխատանքային խումբ |
| 9. Ռազմավարական պլանի հաստատում ավագանու միջոցով | Ավագանու նիստ հանձնաժողովի և Աշխատանքային խմբի մասնակցությամբ |

## Գլուխ 1. Առկա իրավիճակի վերլուծություն

### 1.1. Ընդհանուր տեղեկություններ

Քաջարան համայնքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Քաջարանը մարզի յոթ համայնքներից մեկն է (մյուս համայնքներն են՝ Կապան, Սիսիան, Մեղրի, Գորիս): 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններից հետո Քաջարան քաղաքային համայնքին միավորվել է Անդոկավան, Գեղի, Լեռնաձոր, Քաջարանց, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքները 21 բնակավայրերով: Քաջարանը գտնվում է մայրաքաղաք Երևանից 340 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Կապանից 25 կմ հեռավորության վրա: Համայնքի բնակչությունը պաշտոնական տվյալներով կազմում է 8233 մարդ է (2017թ.):

Համայնքում աղբահանությունն իրականացվում է «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ն:

### 1.2. Օրենսդրական դաշտ և կառավարման կառուցվածք

Օրենսդրություն, ներքին կանոնակարգեր և որոշումներ

Ոլորտին վերաբերող շրջանակային հիմնական փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) համակարգի զարգացման ռազմավարությանն է[1], որի գերակա նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին: Համակարգի ինտեգրվածությունը ենթադրում է թափոնների կառավարման (հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման, իսկ հետագայում նաև վերամշակման) տեխնոլոգիաների և կառավարման համակարգի համադրություն, որը գործելու է ֆինանսական և իրավական կայուն հենքի վրա:

Ռազմավարության իրականացման արդյունքում ենթադրվում է, որ.

- ԿԿԹԿ համակարգը բաղկացած կլինի սահմանափակ թվով տարածաշրջանային ենթահամակարգերից (ոչ ավելի քան 10 տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի շահագործում և ենթահամակարգի համայնքներում աղբահանության իրականացում) և կսպասարկի Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:
- Կտեսակավորվի բնակչության կողմից արտադրվող աղբը
- Զուգընթաց կփակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աղբավայրերը (եթե դրանց արդիականացումը դիտվի ոչ նպատակահարմար):
- Մասշտաբի էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը:
- Մասշտաբի էֆեկտի շնորհիվ նաև կմեծանա համակարգի գրավչությունը մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար

[1] http://www.mtad.am/hy/koshtzargacmancragrer/

- Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը:

Ոլորտը կարգավորող «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի հիմնական առավելությունն այն է, որ վարձավճարների փոխարեն սահմանվել է տեղական վճար, որի գանձումը դառնում է պարտադիր: Այսինքն՝ վարձավճարների զանգվածային չվճարումները, որոնք համատարած էին նախկինում ամենուրեք (և պայմանավորված էր օրենքի բացակայությամբ) այժմ համարվում է օրենքի խախտում: Օրենքի ընդունմամբ սահմանվում է աղբահանության վճարը՝ որպես համայնքային վճար (պարտադիր գանձույթ), ինչպես նաև սահմանվում է աղբահանության վճար վճարողների շրջանակը: Աղբահանության վճար վճարելու պարտականությունը կրում է համայնքների վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, ինչպես նաեւ անշարժ գույք չհամարվող այլ շինությունների (օրինակ՝ շարժական կրպակներ եւ այլն) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձը:

Աղբահանությանը անուղղակիորեն վերաբերող և գործընթացը կարգավորող առկա օրենսդրությունից կարելի է նշել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը, «ՏԻՄ-ի մասին» «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքները և Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին՝ ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանը: ՀՀ ստորագրել է նաև մի շարք, շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող միջազգային համաձայնագրեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են աղբահանության խնդիրներին, աղբահանությանն ուղղակիորեն առնչվող «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, որը ընդունվել է 2004 թ.: 2005-2007թթ. ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներ թափոնների ռեեստրի վարման, գրանցման կարգի վերաբերյալ, որոնք հիմնականում վերաբերում են վտանգավոր թափոններին:

Սակայն «Թափոնների մասին» ՀՀ Օրենքը չի կանոնակարգում ԿԿԹ-ի կառավարումը և միայն թույլ է տալիս Կառավարությանը մշակել ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես աղբավայրերի տեղի ընտրության, ԿԿԹ-ի բաղադրության, արտադրվող, հավաքվող և հեռացվող թափոնների ծավալների վերաբերյալ:

Աղբահանության դիմաց սահմանված վճարների գանձումը կանոնակարգող հիմնական փաստաթուղթը Քաջարան համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 26-ի թիվ 25-Ն որոշումն է համաձայն որի՝ սահմանվում են հետևյալ վճարները.

Աղբահանության վճար, քաղաք Քաջարան 250 դրամ/անձ

Քաջարան համայնքի գյուղական բնակավայրեր 200 դրամ/անձ

ԿԱՕ-ներ, ԱՁ-ներ, շինարարական և խոշոր

եզրաչափերի աղբ.

- 1 խոր.մ 3600 դրամ

- 1 տոննա 4800 դրամ

## 1.3. Աղբահանության կառավարում

Ներկայումս Քաջարանում աղբահանությունը կատարվում է «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից: Ձեռնարկությունում աշխատում են աղբահանությունն իրականացող 8 աշխատողներ, որից 4-ը վարչական: Աղբահանության վարձավճարները հավաքվում են հավաքագրողի միջոցով:

## 1.4. Աղբահանության կառավարման ենթակառուցվածքները

### 1.4.1. Աղբի կուտակում, հավաքում և հեռացում

Քաջարանում կան 70 բազմաբնակարան շենք և 537 տնային տնտեսություն: Համայնքի բնակչության ընդհանուր թիվը ըստ համայնքապետարանի մոտ 8233 մարդ է, որից Քաջարան քաղաքի բնակչությունը կազմում է 7074 մարդ (մոտ 86 %), մնացած բոլոր բնակավայրերում միասին վերցված՝ բնակվում են մոտ 1159 մարդ (մոտ 14 %): Բնակչության հետ կնքվել և կնքվում են աղբահանության պայմանագրեր, աղբահանության դիմաց վճարումները կատարում է բնակչոթան մեծամասնությունը:

«Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի աշխատակիցների և աշխատանքային խմբի կողմից հաշվարկվել են 2018թ. համայնքում արտադրված աղբի քանակությունն ըստ աղբ արտադրողների՝ բնակչության և առևտրային կազմակերպությունների: Հաշվարկի ժամանակ մեկ մարդու կողմից արտադրված աղբի նորման ընդունվել է 0.55կգ/մարդ/օր, աղբի խտությունը 250 կգ/խոր.մետր, իսկ կազմակերպությունների և առևտրային օբյեկտների (ԿԱՕ-ների) կողմից արտադրված աղբի քանակությունն ընդունվել է բնակչության կողմից արտադրված աղբի քանակության 40%-ին հավասար: Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Քաջարան համայնքում արտադրված աղբի քանակությունը 2018թ՝ ըստ աղբարտադրողների /ներառել Քաջարան համայնքի բնակչությունը, տները և ԿԱՕ-ները/

| Աղբ արտադրողներ | Տոննա/տարի | Խոր.մ/տարի |
|---|---|---|
| Համայնքում արտադրված ընդհանուր աղբի քանակը՝ որից | 2313.85 | 578.46 |
| Բնակչություն, որից | 1652.77 | 413.19 |
| - *Բազմաբնակարան շենքեր* | 1420.1 | 355.025 |
| - *Անհատական տներ* | 232.6 | 58.15 |
| ԿԱՕ-ներ | 661.1 | 165.275 |

Աղյուսակ 3. Քաջարանում օգտագործվող մեքենա-սարքավորումներ և աղբամանների բնութագրերը

| Մեքենա-սարքավորումներ և աղբամաններ | Քանակ | Ծավալ | Արտադրության տարեթիվ |
|---|---|---|---|
| KO-440-7 | 1 | 16մ$^3$ | 2018 |
| KO-440-7 | 1 | 16մ$^3$ | 2018 |
| Աղբաման | 140 | 0,5մ$^3$ | 2008 |
| Փոքր աղբամաններ (փողոցներում) | 50 | 0.1մ$^3$ | 2008 |
| | | | |

Թափոնների հավաքման ընդհանուր տեխնիկական պարամետրերը Քաջարանում

Քաջարան քաղաքում աղբահանությունն իրականացնելու համար քաղաքը բաժանվում է երկու մասի՝ սկզբից սպասարկվում է մի մասը՝ հետո մյուսը, կատարվում է օրական 2 անգամ: Լեռնաձոր վարչական շրջաններում աղբահանություն կատարվում է օրական 1 անգամ 1 երթուղիով: Քաջարանց գյուղում աղբահանություն կատարվում է 2 օրը մեկ անգամ, 1 երթուղիով:

Աղյուսակ 4. Քաջարան համայնքում աղբահանության իրականացման նպատակով ծախսված աշխատաժամանակը և աղբահանության ցիկլի տևողությունը

| | Համայնքի գյուղական բնակավայրեր | Քաջարան |
|---|---|---|
| Աղբավայր հեռացնելու ենթակա ԿԿԹ ծավալը (խոր.մետր օր) | **0,5** մ$^3$/օր | **2,45** մ$^3$/օր |
| Հավաքման օրեր/տարի | **84** | **252** |
| Աշխատաժամանակ | | |
| Աշխատաժամանակ (րոպե/օր), որից՝ | **480** | **480** |
| *Առավոտյան նախապատրաստում/րոպե* | ***20*** | ***10*** |
| *Մեկնում դեպի հավաքման վայրեր/րոպե* | ***30*** | ***5*** |
| *Հնարավոր կորուստներ/րոպե* | ***20*** | ***10*** |

| | | |
|---|---|---|
| *Արդյունավետ րոպեներ* | *99* | *111* |
| Ցիկլի տևողություն | | |
| *Հավաքում/րոպե* | *132* | *148* |
| Դեպի աղբավայր/րոպե | *57* | *28.5* |
| *Բեռնաթափում/րոպե* | *20* | *10* |
| *Դեպի հավաքման վայր/րոպե* | *57* | *28.5* |
| Ընդամենը ցիկլի տևողությունը (րոպե) | 336 | 240 |
| Ցիկլերի քանակը/օր | 1.4 | 2 |

Համայնքի յուրաքանչյուր աղբահարթակում տեղադրված է 2 կամ 4 աղբաման: Աղբահարթակները տեղադրված են հաշվի առնելով բնակչության ամենախիտ հատվածները, համաձայնեցված համայնքի սանիտարահամաճարակային ծառայության հետ:

Համայնքում հիմնականում օգտագործվում են 107 նոր աղբամանները, որոնք տեղադրված են բազմաբնակարան շենքերի մոտ , իսկ վարչական շրջաններում 48 աղբաման, որոնք տեղադրվել են հաշվի առնելով խիտ բնակեցված հատվածները:

### 1.4.2. Աղբավայր

Քաջարան համայնքն այս պահին չունի արտոնագրված աղբավայր, աղբահանություն իրականացնող կազմակերպությունն աղբը տանում է Կապան համայնքի աղբավայր, սակայն այս ամենն օրինական ձևակերպում չի ստացել:

### 1.4.3. Աղբի վերամշակման հմտություններ

Համայնքում ներկայումս աղբի վերամշակում կատարվում է հատուկ տեղադրված աղբարկղների միջոցով պլաստիկը ընդհինուր ԿԿԹ-ից տեսակավորելու համար: Սա լուրջ քայլ էր թափոնների քանակությունը կրճատելու ուղղությամբ, քանի որ պլաստիկը կազմում է ԿԿԹ-ի 30 %-ը: Հանրապետությունում տարբեր տեսակի պլաստիկների, թղթի և ապակու վերամշակման հնարավորություններ կան Երևան, Աշտարակ, Աբովյան, Բյուրեղավան և Արտաշատ քաղաքներում, բայց քանի որ Քաջարան քաղաքը գտնվում է վերամշակման հնարավորություններ ունեցող վերոնշյալ կենտրոններից բավականին հեռու, այն հնարավորություն չի տալիս և տնտեսապես արդյունավետ և շահավետ չէ համայնքում թափոններ տեսակավորում կազմակերպելու համար: 2019թ. մարզկենտրոն Կապանում մեկնարկում է պլաստիկի երկրորդային վերամշակման նախագիծը, նախագծի շրջանակներում Քաջարանը ևս կուղարկի առանձնացված պլաստիկ աղբը: Ծրագրի իրականցման նպատակով Քաջարան համայնքը վերոհիշյալ ծրագրի շրջանակներում ստացել է մամլիչ մեքենա և աշխատանքի է ընդունել 1 բանվոր, ով պատասխանատու է պլաստիկ տարրաների կամ այլ նյութերի ընդունման, մամլման և պահեստավորման համար մինչև դրա տեղափոխումը Կապանի պլաստիկի վերամշակման գործարան:

### 1.4.4. Ֆինանսական –տնտեսական ցուցանիշներ

Համայնքի ավագանու որոշմամբ, բնակչությունից հավաքվող աղբի վարձավճարը սահմանված էր 250 դրամ/մարդ/ամիս 1-ին գոտի և 200 դրամ/մարդ/ամիս 2-րդ գոտու համար, իսկ ԿԱՕ- ներից՝ 80 դրամ/մ$^{2}$ 1-ին գոտու համար և 60 դրամ/մ$^{2}$ 2-րդ գոտու համար:

Աղյուսակ 6. Բնակչության և ԿԱՕ-ների հետ կնքված պայմանագրերը

| | Բնակչություն | | | ԿԱՕ-ներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ամիս | **Փաստացի բնակչություն** | **Պայմանագրեր** | **%** | **ԿԱՕ-ների թիվը** | **Պայմանագրեր** | **%** |
| Հունվար | **8233** | **5990** | **72,7** | **137** | **135** | **98.54** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փետրվար | 8233 | 6043 | 73,4 | 137 | 136 | 99.27 |
| Մարտ | 8233 | 6111 | 74,2 | 137 | 137 | 100 |

### 1.4.5. Աղբահանության գծով ընկերության եկամուտներն ու ծախսերը

Ստորև, Աղյուսակ 7-ում ներկայացվում է Քաջարան համայնքի աղբահանության եկամուտներն ու ծախսերը: Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ Կազմակերպության եկամուտները ամիս առա ամիս ավելանում են, այսինքն Կազմակերպությունը կարողանում ծախսածածկում կատարել:

Աղյուսակ 7. Աղբահանության եկամուտներն ու ծախսերը (ՀՀ դրամ)

| Ֆինանսական ցուցանիշ (ՀՀ դրամ) | 2019 թ. հունվար | 2019 թ. փետրվար | 2019 թ. մարտ |
|---|---|---|---|
| Եկամուտներ | 4005349 | 4038249 | 4537213 |
| Ծախսեր | 4005349 | 4038249 | 4537213 |
| Մնացորդ | 0 | 0 | 0 |

Աղյուսակ 8. Բնակչությունից և ԿԱՕ-ներից գանձվող մուտքերը և հավաքագրման տոկոսները

| Տարի | Բնակչություն | | | ԿԱՕ-ներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պլան | Փաստացի | % | Պլան | Փաստացի | % |
| 2019թ. Հունվար | 1 583 000 | 33 750 | 2,1 | 3 660 268 | 33 511 | 0,91 |
| 2019թ. Փետրվար | 1 583 000 | 1 402 375 | 88,5 | 3 660 268 | 116 796 | 3,19 |
| 2019թ. Մարտ | 1 583 000 | 1 474 405 | 93,1 | 3 660 268 | 3 660 268 | 100 |

ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքը

Համայնքապետարանի և Կազմակերպության հետ համատեղ 2017 թվականին կատարվել է ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման աշխատանքներ:

«Ուրբան» հիմնադրամի փորձագետների կողմից կազմակերպվել է աղբահանության ինքնարժեքի հաշվարկման դասընթաց և նրանց հատկացվել է ինքնարժեքի հաշվարկման ձև՝ էլեկտրոնային տարբերակով: Ըստ այդ ձևի հաշվարկվել է աղբահանության իրականացմա փաստացի ինքնարժեքը 2019թ.-ի համար: Աղյուսակ 9.-ում ներկայացված են հաշվարկի ամփոփ տվյալները.

Աղյուսակ **9.** ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկման ամփոփ աղյուսակ

| Անվանումը | Ընդամենը՝ ՀՀ դրամ |
|---|---|
| Աշխատուժ | 6 712 000 |
| Արտահագուստ և գործիքներ | - |
| Տեխնիկայի շահագործում և պահպանում | 1 959 434 |
| Աղբամանների շահագործում և պահպանում | - |
| Վարչական ծախսեր | - |
| Բնապահպանական վճար | 110 160 |
| Այլ ծախսեր | - |
| Ենթագումար | - |
| ԱԱՀ | 2 516 180 |
| Ընդհանուր ծախսը | **11 297 744** |
| | |
| Միավոր ինքնարժեքը, դրամ /մ$^3$ | 3600 |
| Մեկ անձի կողմից արտադրվող ԿԿԹ-ների | 0,55 |

| | |
|---|---|
| քանակությունը՝ կգ անձ/օր | |
| Մեկ անձի հաշվով փաստացի ինքնարժեքը՝ դրամ | 250 |

Ներկա վճարը, որը հաստատվել է համայնքի ավագանու կողմից և կազմում է մեկ շնչի հաշվով Քաջարան քաղաքի համար 250 դրամ, իսկ գյուղական բնակավայրերի համար 200 դրամ: Աղբահանություն ինքնարժեքի հաշվարկը իրականացվել է՝ ներառելով նոր մասնագիտացված աղբատար մեքենաները, որը ՋՊՄԿ-ն հատկացրել է Կազմակերպությանն անհատույց օգտագործման նպատակով: Հաշվարկի արդյունքում Քաջարան համայնքում աղբահանության ինքնարժեքը կկազմի 250 դրամ/մարդ/ամիս:

Այնուամենայնիվ դեռևս հնարավոր է նվազեցնել աղբահանության սակագինը, եթե իրականություն դառնա աղբի, հատկապես պլաստիկ աղբի տեսակավորման գործելակերպը, որը խթանվելու և իրականացվելու է ծրագրի ողջ ընթացքում: Պլաստիկի տեսակարար կշիռն ընդհանուր աղբի մեջ կազմում է 25-30%, ուստի տեսակավորման դեպքում, աղբավայր տեղափոխվող աղբի ծավալները կկրճատվեն, հետևաբար սակագինը նույնպես կնվազի:

## 1.5. Հանրային իրազեկություն և մասնակցություն

Որպես ռազմավարության մշակմանը հանրությանը մասնակից դարձնելու առաջին փուլ «Ուրբան» հիմնադրամի կողմից իրականացվեց հանրային կարծիքի հարցում ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան բազմաբնակավայր համայնքի բնակչության շրջանում:

Հարցման նպատակն էր նաև ուսումնասիրել բնակչության ընկալումները, վերաբերմունքը և նախապատվությունները աղբահանության, աղբի տեսակավորման վերաբերյալ:

Գլխավոր համախմբությունը Քաջարան բազմաբնակավայր համայնքնի բնակչությունն է: Ընտրանքային համախմբությունը 367 տնային տնտեսություն է (95% վստահելիության միջակայք, 0.5% սխալի հավանականություն):

Ստորև հակիրճ ներկայացվում են հարցման հիմնական արդյունքները.

*Աղբահանության որակը*

Հարցմանը մասնակիցների մոտ 96 %-ը (Պատկեր 1) գտնում է, որ համայնքում իրականացվում է աղբահանություն, մինչդեռ 4 %-ը՝ չի կիսում այդ կարծիքը: Աղբահանության իրավիճակի վերոնշյալ վերլուծությունից ելնելով, այն է, որ աղբահանող Կազմակերպությունը դեռևս չի կարող ապահովել աղբահանության լիարժեք ծածկույթ, կարելի է ենթադրել, որ բացասական կարծիք ունեցողները հիմնականում այն վարչական շրջանների բնակիչներն են, որտեղ աղբահանություն չի կատարվում:

Պատկեր 1




Պատկեր 2




*Գոհունակությունը և վճարելու պատրաստակամությունը*

Հարցման մասնակիցների մեծամասնությունը (մոտ 96 %) պատասխանել է որ վճարում է աղբահանության դիմաց: Հարցման մասնակիցների 50 % -ը նշել է, որ լիովին բավարարված է աղբահանության որակից, 30 %-ը նշել է, որ որոշ չափով բավարարված չէ հիմնականում նշելով որպես պատճառ աղբամանների տեղակայությունը և այլ պատճառներ: Հարցման մասնակիցների 17 %-ը նշել է, որ որոշ չափով բավարարված է իսկ 3 %-ը նշել է, որ բավարարված չէ (այս պատասխանը հիմնականում նշել են այն վարչական շրջանների բնակիչները որտեղ աղբահանություն չի կատարվում) (Պատկեր 3):

Պատկեր 3




*Հանրային իրազեկման և կրթության դերը աղբահանության բարելավման հարցում*

Հարցման մասնակիցները նաև կարծիք են հայտնել, թե արդյոք հանրային իրազեկությունն ու կրթությունը կօգնեն աղբահանության խնդիրների լուծմանը (Պատկեր 4):

Պատկեր 4



Հարցված բնակչության 94%-ը գտնում է, որ հանրային իրազեկումն ու կրթությունն անհրաժեշտ են իրենց համայնքում աղբահանության բարելավման համար: Մնացած 6% -ը չեն կիսում այդ կարծիքը:

*Աղբի տեսակավորում, վերամշակում*

Հարցման ընթացքում ուսումնասիրվել է նաև բնակիչների վերաբերմունքը աղբի տեսակավորման և վերմշակման վերաբերյալ իրենց համայնքում (Պատկեր 5):

Պատկեր 5




Բնակչության մեծամասնությունը (85%-ը) պատրաստ է տեսակավորել աղբը, 8 %-ը պատրաստ չէ տեսակավորել իսկ 7 %-ը դժվարանում է պատասխանել հարցին:

## 1.6. Իրավիճակային վերլուծություն (SWOT)

Հաշվի առնելով Քաջարան համայնքի աղբահանության ներկայիս իրավիճակը կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև համայնքի թույլ կողմերի և համայնքից դուրս գտնվող բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն): Ստորև ամփոփ ներկայացվում է այդ վերլուծության արդյունքները, որոնք կատարվել են աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ: Վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել այն պայմանները, որոնք սպասվում են ապագայում՝ հաշվի առնելով արտաքին դրական և բացասական ազդեցությունները: Դրանք կներկայացվեն հաջորդ գլխում՝ ռազմավարության և աղբահանության տեսլականի մասում: Միևնույն ժամանակ, ներքին հատկանիշները օգնում են ուրվագծել և ձևակերպել ներկայիս հիմնահարցերն ու խնդիրները:

Աղյուսակ 10. Քաջարան համայնքի աղբահանության SWOT վերլուծություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Աղբահանության ծառայության առկայություն
- Աղբահանություն իրականացնելու գրաֆիկի առկայություն
- Աղբամանների առկայություն
- Աղբատար մեքենաների առկայություն
- Համայնքապետարանն ունի լուրջ փորձ և պոտենցիալ միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու համար
- Բնակչության կողմից վարձավճարների հավաքման բարձր մակարդակ
- Նոր մտածելակերպի և բարեփոխումների նկատմամբ դրական վերաբերմունք համայնքապետարանի և աղբահանության սպասարկող ձեռնարկության կողմից

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքն աշխատում է միջազգային կազմակերպությունների հետ
- Միջազգային ծրագրերի մասնակցություն
- Միջհամայնքային համագործակցություն
- Համայնքը գիտակցում է իր դերը և պատասխանատվությունը համայնային ծառայությունների որակի բարձրացման համար և ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները բնակիչների և ՏԻՄ – երի վարքագծի դրական փոփոխությունների համար

Թույլ կողմեր

- Բնակչությանը տեղեկացնելու մշտական և կանոնավոր միջոցների բացակայություն
- Բնակչության անհիրազեկությունը և մտածելակերպը թափոնների տեսակավորման և վերամշակման նկատմամբ
- Աղբահանության աշխատաշուկան գրավիչ չէ, ուստի վարձու աշխատողներ գտնելը բավականին դժվար է
- Աղբավայրի բացակայություն
- Համայնքի տեղանքը կտրտված է
- Աղբի տեսակավորման մշակույթի բացակայություն

Վտանգներ

- Ճանապարհների շահագործման սեզոնային դժվարություններ
- Աղբահանության վերաբերող ազգային օրենսդրական բարեփոխումների պակաս՝ նորմերի նորմատիվների բացակայություն
- Միջազգային կազմակերպությունները մատնանշում են կոմբինատի առկայությունը և ինչ որ չափով ֆինանսապես խուսափում են աջակցել
- Աղբավայրի բացակայություն

## ԳԼՈՒԽ 2. Տեսլական և երկարաժամկետ նպատակներ

Աղբահանության գործունեության ուսումնասիրությունների հիման վրա վերլուծվել է աղբահանության ներկայիս իրավիճակը, որը փորձում է պատասխանել «որտե՞ղ ենք մենք այժմ» հարցին: Դրանք շարադրվել են ներկայիս իրավիճակի մասին մի շարք տվյալների և աղբահանության ներքին թույլ և ուժեղ կողմերի վերլուծությամբ: Միաժամանակ աշխատանքային խմբի հետ համատեղ որոշվել է աղբահանության տեսլականը և երկարաժամկետ նպատակները «որտե՞ղ ենք մենք ուզում լինել» հարցադրմամբ: Աղբահանության տեսլականը արտահայտում է հավաքական ըմբռնումը այն բանի, թե ապագայում ինչ ցանկալի և իդեալական իրավիճակի պետք է ձգտի հասնել աղբահանության կազմակերպման ծառայությունը Քաջարան համայնքում: Աղբահանության տեսլականը աշխատանքային խմբի հետ քննարկման արդյունքներով բերվե»լ է հետևյալ ձևակերպմանը:

Աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծում հիմնված աղբի կրճատման, վերամշակման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված կայուն գործելակերպի, ֆինանսապես կենսունակ կառավարման և հանրության աջակցության և մասնակցության վրա:

Աղբահանության ոլորտները և ռազմավարական նպատակները

Աշխատանքային խմբի հետ համատեղ խմբավորվել են զարգացման ոլորտները, որոշվել են աղբահանության ռազմավարական ուղղությունները և սահմանվել են երկարաժամկետ նպատակներ: Աղբահանության զարգացումը պահանջում է կոմպլեքս մոտեցում, հետևաբար ռազմավարությունը պետք է հիմնվի տարբեր ոլորտների զարգացման վրա: Այդ ոլորտներն են:

<u>Ա. Համակարգի զարգացում</u> (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին օրենսդրություն և կանոնակարգեր)

<u>Բ. Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում</u> (Աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման, վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր)

<u>Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն</u> (ինքնածախսածածկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման մեթոդներ, ստացականների և պայմանագրերի կիրառման ձևեր, աղբի տեսակավորման և վերամշակման հնարավորություններ և այլն)

<u>Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն</u> (երկկողմանի տեղեկատվության կիրառում):

Նշված ուղղություններին համապատասխան ձևակերպվել են 4 երկարաժամկետ (2019-2023թ.թ.) նպատակներ, հաշվի առնելով Քաջարան համայնքի աղբահանության տեսլականը: Ստորև ձևակերպված յուրաքանչյուր նպատակ ենթադրում է Քաջարան համայնքի աղբահանությանը վերաբերող առանձին խնդիրների և դրանցով պայմանավորված կոնկրետ ծրագրերի իրականացում: Իսկ յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար ԳԼՈՒԽ 5-ում դրված են խնդիրներ և առաջադրանքներ, որոնց լուծման համար նշված են ժամկետներ, պատասխանատուներ և հղում ֆինանսական աղբյուրներին:

Ստորև ձևակերպված են այդ 4 նպատակները, որոնք համապատասխանում են վերոնշյալ ոլորտներին.

Ա. Ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին կանոններ և կանոնակարգեր):

Նպատակ 1. Բարելավել համայնքում աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային դաշտ:

Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք (ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման և վերամշակման/վնասազերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր):

Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Քաջարան համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացին:

Ստորև բերվում է տեսլականի և նպատակների ամփոփ սխեման.

Սխեմա 2. Քաջարան քաղաքի աղբահանության կառավարման ռազմավարության տեսլականը և ռազմավարական նպատակները



Աղյուսակ 10.

| ՉԱՓԱՆԻՇ | Գնահատման սանդղակ | Միավոր | Կշիռ |
|---|---|---|---|
| Գնահատված դրամական արժեքը | < 500,000 դրամ | 4 | |
| | 500,00- 2,500,000 դրամ | 3 | |
| | 2,500,000 – 5,000,000 դրամ | 2 | |
| | > 5,000,000 դրամ | 1 | 1,25 |
| Բնապահպանական և առողջապահական ազդեցությունը | բացասական | 0 | |
| | չկա | 1 | |
